«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր

«Հայաստանում գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում Կոոպերացիայի զարգացման մարտահրավերները»

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ քննարկման հիման վրա
(առանց հղումների իրավունքի)

Համառոտ Նկարագիր

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների կողմից զարգացման ներկա փուլում արդյունավետությունը բարձրացնելու միակ ճանապարհ է համարվում տնտեսությունների խոշորացումը: Միևնույն ժամանակ գյուղական համայնքներում համագործակցության փայլուն օրինակներ կան: Կոոպերատիվների, որպես այդ համագործակցության ինստիտուցիոնալ ձև, ձևավորման գործընթացը խեղաթյուրվեց այն ժամանակ, երբ դրանք դարձան դոնորից գումար պոկելու միջոց: Սույն փաստաթղթի նպատակն է ևս մեկ անգամ ուշադրություն գրավել կոոպերատիվի, որպես խոշորացմանը միտված մոդելի կայացմանը խոչընդոտող գործոնների վրա, քանզի Հայաստանում բնակվող երեք հարյուր հազարից ավել փոքր ֆերմերների համար այլընտրանք այս պահին չկա: Կամ եթե «թաղում ենք» այս գաղափարը, պետք է հասկանանք՝ որն է այլընտրանքը:

Խոչընդոտներ

✓ Քաղաքացիական օրենսգիրքը ամբողջությամբ չի արտացոլում ինչպես միջազգային պայմանագրերի, այնպես էլ Սահմանադրության իրավական պահանջները: Այս համատեքստում պատշաճ կարգավորում չի ստանում նաև կոոպերատիվների և սոցիալական ձեռնարկությունների գործունեությունը:

✓ Կոոպերատիվների անարդյունավետության պատճառը պրոֆեսիոնալիզմի պակասն է՝ սկսած պետական քաղաքականության համար պատասխանատու մարմնից մինչև ստորին մակարդակում քաղաքականությունը իրականացնողների:

✓ Կոոպերատիվների չկայանալու պատճառները բազմազան են՝ սկսած ֆինանսական գրագիտության պակասից մինչև համագործակցային խնդիրներ: Սակայն, առաջնային տեղում անբարենպաստ հարկային քաղաքականությունն է:

✓ Օրենսդրությամբ չեն սահմանվում կոոպերատիվների գործունեության սահմաններն ու մանրամասները, արդյունքում անորոշություն է առաջանում, թե որ միություններն են կոոպերատիվներ: Ներկա կարգավորումներով կոոպերատիվի լուծարման պարագայում գույքը բաժանվում է անդամների միջև: Այս պարագայում մարդիկ կարող են միավորվել,

դոնոր կազմակերպություններից դրամաշնորհ ստանալ, գույք ձեռքբերել, այնուհետև լուծարել կոոպերատիվը և գույքի վաճառքից ստացած գումարը բաշխել միմյանց միջև:

✓ Բոլոր այն երկրներում, որտեղ կոոպերատիվները կայացել են, հսկայական աշխատանք է տարվել, 10-20-30 տարի ձևավորված կոոպերատիվներին աջակցություն է տրամադրվել: Մեր երկրում էական խթաններ և աջակցություն չկա կոոպերատիվներին:

Առաջարկություններ

✓ Կոոպերատիվների աշխատանքի նկատմամբ հանրային պահանջարկ կա: Հայաստանի համայնքներում կոոպերատիվների ձևավորման պահանջարկ կա, մարդիկ ամենօրյա հաց վաստակելու անընդհատ փնտրտուքի մեջ են, համապատասխան շոշափելի առավելությունների առկայության պարագայում վերջիններս շահագրգռված կլինեն ստեղծել և գործարկել գյուղատնտեսական կոոպերատիվներ: Անհրաժեշտ է աշխատանքներ տանել մարդկանց իրենց օգուտները «գրպանային», մատչելի լեզվով բացատրելու ուղղությամբ:

✓ Արդեն իսկ կոոպերատիվների կայացման ուղղությամբ հսկայական ջանքեր են գործադրվել, միայն Համաշխարհային բանկի կողմից 800-1000 տրակտորներ են տրամադրվել: Այս գործընթացը պետք է ոչ թե կասեցնել, այլ դարձնել վերահսկելի: Վրաստանը նման փորձ ունի. մասնագիտացված պետական գործակալությունը վերահսկողություն է իրականացնում կոոպերատիվների գործունեության նկատմամբ: Մեկ տարվա ընթացքում տրամադրած գույքի 20%-ը այդ գործակալությունը հետ է վերցրել:

✓ Կոոպերատիվների կայացած փորձ ունեցող երկրներում կոոպերատիվներում ներգրավված ֆերմերների թիվը գերազանցում է ընդհանուր ֆերմերների թվին: Այսինքն, մեկ ֆերմերը ներգրավված է մեկից ավելի կոոպերատիվում: Եթե այլընտրանքներ լինեն, մարդիկ հավանաբար կգտնեն իրենց հարմար կոոպերատիվը:

✓ Նախկինում, նշվում էր, որ դեմոկրատիան մեր ազգի դիմագիծը չէ, վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ դա այնքան էլ այդպես չէ: Կոոպերատիվներում համագործակցային մշակույթի կայացման համար էլ պետք է ճիշտ հաղորդակցություն վարել:

✓ Բարենպաստ հանրային քաղաքականություն ասելով անհրաժեշտ է հասկանալ ոչ թե հարկային արտոնությունների տրամադրում, այլ առկա անհավասարության վերացում: Անհրաժեշտ է հաշվի առնել կոոպերատիվի՝ որպես կազմակերպաիրավական ձևի առանձնահատկությունները:

✓ Կոոպերատիվների մասին խոսելիս անհրաժեշտ է խուսափել դրանք սեփականության միավորման հետ կապելուց: Համախմբումը պետք է տեղի ունենա գործընթացի շուրջ: